ան ոչինչ ըրաւ ցարդ ու ոչինչ ալ պիտի ընէ այսուհետեւ։

Այս անտարբերութիւնը պէտք է բացատրել երկու պատճառով. նախ՝ ուժ չունի. տկար ու անկազմակերպ և անկարող է պետական ուժը չէզոքացնել և երկրորդ՝ գիւղացիներու սիրոյն համար շատ ալ տրամադիր չէ վշտացնել պէկութիւնը, որովհետեւ պատերազմի ատեն անոնց ցոյց տալիք օժանդակութեան վրայ խոշոր յոյսեր ու ակնկալութիւններ ունի։

Այսպիսով ուրեմն, պէկերու և իւղացիներու միջև առաջացած պայքարին դէմ կառավարութիւնն ընդհանրապէս թոյլ է, անտարբեր ու անկարող, և պէկութիւնը չնորհիւ իր ունեցած պատկառելի ուժին սարսափ կը թափէ ամեն կողմ, իր գոյութիւնը ապահովելու համար։

«Հայրենիք»

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՍԷԶՕՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Ամեն անգամ, երբ առիթ ենք ունենում թատրոն գնալ,—միշտ տխուր տպաւորութեան տակ ենք դուրս գալիս, ոչ թէ տրուած որևէ թատրոնական պիէսի վատ կամ լաւ լինելու համար, յաջող կամ անյաջող ներկայացնելու համար,—այլ սեփական թատրոնական չէնք չունենալու համար։

Թիֆլիզը ռուսահայութեան մտաւոր կենդրոնն է համարւում և մենք չունինք թատրոնական մի՝ թէկուզ անշուք չէնք և հայկական ներկայացումների համար ստիպուած ենք լինում մուրալ այս կամ այն թատրոնի չէնքը, ուր շաբաթական հազիւ մի կամ երկու օր համաձայնում են մեզ տալ և այն էլ շաբաթուայ օրերից ամենաանպատեհ համարուածները։

Դժուար չէ ուրեմն երևակայել, որ այսպիսի պայմաններում հայ թատրոնը հարկաւոր հետաքրքրութիւնն եւ հեղինակութիւնը չի վայելում մեզանում.

Մայրենի բեմի այսպիսի վիճակը պատուաբեր չէ մեզ համար։

Հայ հարուստը միշտ էլ եղել է բարեգործ. նրա բարեգործութեան արդիւնք են մեր բոլոր աստուածահաճոյ հիմնարկութիւնները։ Մենք համոզուած ենք, որ նա չի զլանայ իր լուման և՛ մայրենի բեմի համար. միայն պէտք է, որ այդ—սեփական չէնք ունենալու գործի գլուխ անցնեն հասարակութեան մէջ հեղինակութիւն ունեցող մարդիկ և կոչ անեն նրա առատաձեռնութեան։

Թատրոնական վարչութիւնների սեպուհ պարտականութիւնն է այդ մասին մտածել։ Թէ ինչ ձևով կարելի է իրականացնել սեփական չէնքի գաղափարը—արդեօք գտնելով մի բարերար թէ կոպէկ-կոպէկ ժողովելով—այդ խնդիրը թողնում ենք որոշելու գործող մարմնին, բայց մի բան անկասկած է, որ պէտք է ունենալ սեփական թատրոնական չէնք—եթէ ուզում ենք, որ մեր բեմն էլ հարկաւ կրթիչ ու ազնուացուցիչ դերը ունենայ մեր ժողովրդի կեանքում,—և պէտք է այժմեանից աշխատել այդ մասին, առանց վաղուան յետաձգելու։

Տ.-Ե.

ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

Երբ մի կարևոր և անհրաժեշտ խնդրի մասին առաջարկ է լինում որևէ ընկերութեան կամ հիմնարկութեան, լինի նա ազգային թէ միջազգային, պետական թէ հասարակական, անպայման եթէ ոչ լիովին, գոնէ մասամբ քննութեան է առնում առաջադրած խնդիրը և հարկաւոր համարուած դէպքում իր հոգածութեան հերթական առարկայ դարձնում։ Այսպէս է ընդունուած ամեն տեղ, ամեն հաստատութիւնների մէջ, որի ղեկավարները փոքր ի շատէ կրթուած, ժողովրդի ցաւերին կարեկից անձնաւորութիւններ են։

Սակայն դժբաղդաբար մեզանում—մասնաւորապէս Թիֆլիզում բացակայում է գործունէութեան այդ սիստէմը և ամեն մի հասարակական գործ միշտ էլ կրիայի քայլերով է առաջ գնում և երբեմն էլ աննախանձելի, շատ անգամ մահուանը մօտեցող վիճակին է հասնում, երբ իր «խնամատարների» կողմից մատնուում է դատապարտելի անուշադրութեան։

Բազմաթիւ օրինակներից յիշենք մէկը միայն։

Թիֆլիզի Հաւլաբար քաղաքամասը, որ վերջերս արտաքուստ սկսել է հետզհետէ զարդարուել ու բարեկարգուել, ներքուստ մնում է նոյնը, ինչ որ տասն տարի սրանից առաջ էր և մտածող անգամ չկայ նրա ներքին կեանքի յառաջադիմութեան մասին։ Մինչդեռ քաղաքը բարւոք և ծաղկած վիճակի մէջ պահելու համար անհրաժեշտ է արմատապէս բարենորոգութեան ենթարկել նրա ներքին կեանքը, նրա մտաւոր-բարոյական կողմը։

Կրկնում ենք Հաւլաբարը վերջին մի քանի տարիների ընթացքում յառաջադիմել է միայն տեսականապէս, արտաքուստ. իսկ ներքուստ յետադիմել, եղած չնչին հասարակական հիմնարկութիւններն էլ—թատրոն, հասակաւորների դպրոց—փակուեր է և այսօր Հաւլաբարի ազգաբնակութեան մի որոշ մասը հոգեկան հաճոյք կամ մտաւոր որոշ բաւականութիւն ստանալու համար ստիպուած են լինում 3—4 վերստ հեռաւորութեան վրայ գտնուող թատրոններն հասնել, այն էլ երբեմն տոմսակ չլինելու պատճառով գլխիկոր վերադառնում. իսկ մի մասն էլ իրեն ժամանցի և զուարճութեան վայր ընտրում է գինետունը և արիւնի գնով վաստակած կոպէկները տալիս ոգելից խմիչքներին ու թունաւորում իր՝ առանց այն էլ հոգնած ու մաշուած մարմինը..

Այս ցաւալի երևոյթը բազմիցս արձանագրուել է մեր մամուլի էջերում և միշտ մնացել անուշադիր։ Մի քանի անգամ առիթ ենք ունեցել հրաւիրելու Թիֆլիզի քաղաքային վարչութեան ուշադրութիւնը Հաւլաբարում

մի համեստ ժողովրդական տուն կառուցանելու համար, ուր տրուէին զուտ ժողովրդական ներկայացումներ և կազմակերպուէին ժողովրդական դասախօսութիւններ. սակայն քաղաքային վարչութիւնը միշտ էլ մնացել է ձեռնպահ և անտարբեր, կարծես Հալաբարը քաղաքից անջատ, նրա հետ կապ չունեցող վայր լինի։ Եւ այսպիսի անտարբերութիւնը դէպի մի՝ կենսական խնդրի հետ անմիջական կապ ունեցող հիմնարկութիւնը՝ անպայման դատապարտելի է։

Որքան մեծ չարիք է ոգելից խմիչքների գործածելը, նոյնքան և աւելի մեծ բարիք կարող է լինել և բարերար ազդեցութիւն կունենայ Հալաբարում ժողովրդական տունը, որը ոչ միայն կը նպաստէ հալաբարցու մտաւոր-բարոյական յառաջադիմութեան, այլև յետ կը կասեցնէ գինետներից այն բազմաթիւ բարոյապէս վատանդուածներին, որոնք սպառնում են ապագայում այլասերել, այլանդակել իրենց շրջապատի մատաղ սերնդին։

Ապագայում այս ցաւալի դրութիւնից հալաբարցուն ազատելու համար անհրաժեշտ է կառուցանել մի համեստ ժողովրդական տուն, որ իր մէջ պարունակէր գոնէ Զուբալովի Ցան յարմարութիւնների մի քառորդը։

Եւ վերջապէս քաղաքային վարչութեան պարտականութիւնն է մտածել այդ մասին և յանուն իր խնամքին յանձնուած ժողովրդի մտաւոր-բարոյական կեանքի յառաջադիմութեան՝ օր առաջ ձեռնարկէ այդ հիմնարկութեան կառուցման։

Գ. Օհանեան

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՑՕՐԵԼԵԱՆԸ

Քաղաքիս ինտելիգէնտ հասարակութիւնը պատրաստութիւն է տեսնում հանդուն կերպով ամսոյս 19-ին մի երեկոյթ կազմել չքեղ տօնելու համար համազգային տառերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի մեծ յօբելեանը։ Ցօնին աւելի վայելուչ կերպարանք տալու համար Աղէքսանդրապոլից հրաւիրել են երգիչ նուագածու Թառիսա Գրիգոր Ցալեանի խումբը։ Այս երկրորդ անգամն է, որ այսպէս պատրաստութիւններ են տեսնուում այդ տօնի առիթով։

Ներկայումս գործի գլուխ կանգնած են բացի նախկին նախաձեռնող պարոններից նաև տեղիս քահանաները, որոնք աշխատում են գրական գեղարուեստական բաժինը աւելի ճոխ և բազմաբովանդակ կերպով ցուցադրել հետաքրքրուող հասարակութեան։

Տեղիս քահանաները բոլորն էլ գրեթէ ձեռնհաս կրթուած մարդիկ են և երբ ուզենան կարող են մեծ բան կատարել եթէ գէթ համերաշխութիւնը գերիշխող լինէր նրանց մէջ։ Քահանաները այժմ պատրաստում են հրատարակել այդ նշանակալից տօնի օրը մի «ալմանախ», բարեբաղդաբար նրանց մի ժողովում ինձ վիճակուեց ներկայ գտնուել, որտեղ կարդում էին, քննում, քննադատում Ալմանախի համար ընտիր գրուածքները, և ապայանձնում տպագրութեան։ Պէտք է ասել, որ ամեն ոք էլ հասարակութիւնից կարող էր մասնակցել գրականների այդ ժողովին, ով ի հարկէ պատրաստած ունենար «Ալմանախի» համար մի գրաւոր աշխատութիւն։

Ահա այսպէս չուտով քաղաքումս տօնուելու է Համազգային Մեծ Ցօրելեանը և տայ Աստուած, որ փառաւոր և չքեղ կատարուի այդ ազգային տօնը։ Ցուսալի է, որ լաւ պէտք անցնի, որովհետև այժմ վաճառական հարուստ դասակարգից մասնակցողներ կան հանդէսին, որոնք այնքան մօտ են համարել իրենց սրտին յօբելեանական տօնը, որ պատրաստակամութիւն են յայտնել մինչև անգամ ինչպէս լսեցինք, հարկաւոր ծախքը իրենք հոգալու և չթողնելու, որ տեղիս գրական-գեղարուեստական ընկերութիւնը, որ նախաձեռնողն է եղել այս սուրբ գործին, դէֆիցիտ ունենայ։ Առիթ կունենանք տօնակատարութեան մասին յետոյ յայտնել մեր կարծիքը։

Այս յօբելեանական տօնի առթիւ և դպրոցական ֆոնդի համար թեմիս սրբազան առաջնորդը գնացել է հիւսիսային Կովկասի քաղաքները։ Նորին Սրբազնութիւնը ունէր նոյնպէս կատարելու կարևոր պաշտօնական գործեր իր այցելած վայրերում։ «Մշակ» լրագրի խմբագրութիւնից յայտնած էր, որ իբրև թէ թեմիս սրբազան առաջնորդ Մխիթար եպիսկոպոսը հրաժարական է տուել պաշտօնից, գալիս եմ յայտնելու, որ միանգամայն սխալ է այդ տեղեկութիւնը և ինչպէս ինձ յայտնի է սրբազանը հրաժարական չի տուել։

Վինուս

Աստրախան, 6 հոկտ.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՑՕՆԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

(Քաղուած թերթերից)

Հոկտեմբերի 11-ին, ուրբաթ օրը զանազան վայրերից հաւաքուել էր մօտ 150 պատգամաւոր։ Երեկոյեան Կաթողիկոսը ամբողջ միաբանութեան ուղեկցութեամբ հանդիսաւորապէս իջաւ Մայր Տաճար։

Ժամերգութիւնից յետոյ տեղի ունեցաւ պատգամաւորների խորհրդակցութիւն դպրոցական ֆոնդի մասին։ Որոշուեց, որ հասարակութիւնը մասնակցէ ֆոնդի գործադրութեան կազմակերպութեանը։ Քննուեցին դպրոցական խնդիրներ։

Շաբաթ օրը տեղի ունեցաւ հանդիսաւոր թափօր Էջմիածնից Օշական, Կաթողիկոսի, վանքի միաբանութեան, Շեմարանի աշակերտութեան և ուսուցչութեան, պատգամաւորների և խուռն բազմութեան մասնակցութեամբ։ Տպաւորութիւնը վեհ էր։

Օշականի եկեղեցում տեղի ունեցած պատարագից յետոյ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարուեց ս. Մեսրոպի գերեզմանի վրայ, որով բացուեցան հանդէսները։